ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2026 թվականի N 128 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 138-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 2-րդ կետի «Քանակը» սյունակի «1 000 000» թիվը փոխարինել «2 500 000» թվով.

2) 2-րդ կետի «Արժեքը» սյունակի «1 000 000 000» թիվը փոխարինել «2 200 000 000» թվով.

3) հավելվածի ցանկը 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 3-րդ կետով՝

«

3.	0405101900	Կարագ սերուցքային	Յուղայնությունը ոչ ավելի 85%	կգ	1 700 000	ԱՄՆ, Կանադա, Ուրուգվայ, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Իտալիա, Դանիա, Լեհաստան, Գերմանիա, Հոլանդիա, Իրանի Իսլամական Հանրապետություն	ԱՄՆ, Կանադա, Ուրուգվայ, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Իտալիա, Դանիա, Լեհաստան, Գերմանիա, Հոլանդիա, Իրանի Իսլամական Հանրապետություն	2 800 000 000	

».

4) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «5 000 000 000» թիվը փոխարինել «9 000 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ